ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱԷ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Գլխարկ՝ կեպի ձմեռային գունաքողարկող: Գլխարկի երեսացուն կարվում է 51% բամբակ 49% պոլիէսթեր APT.-4c5-KB, 210գ մակերեսային խտությամբ, պատկերը-4735/1, գունաքողարկաող կտորից, և սև գույնի արհեստական մորթուց: Գլխարկը բաղկացած է ոստիկանական գունաքողարկվող գործվածքով կոշտ հովհարից, կողամասերից, հատակից և սև գույնի արհեստական մորթե ականջակալներից: Հովհարի ներսից տեղադրվում է 2-3 մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովհարի լայնությունը 6-8 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ՝ գունաքողարկվող կտորից: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ ոստիկանության փոքր գլխարկանշանը: Աստառը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ սև գույնի բամբակյա կտորից: Մորթին եզրերից մշակվում է 5մմ լայնության երեսացուի գործվացքից տիսմայով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների դարձերեսին, ականջակալի երկայնքով քունքամասերի եզրերից կարվում են են 2սմ լայնության սև գույնի կպչուն ժապավեններ՝ գլխարկաբոլորքին ամրացնելու նպատակով:Նույն ուղղությամբ գլխարկաբոլորքի բարձրությամբ ևս կարվում են 2սմ լայնության սև գույնի կպչուն ժապավեններ: Ականջակալների գլխարկահատակի միացման մասում՝ ականջակալի և գլխարկահատակի վրայից ականջակալների ձևվածքով (կիսաէլիպսաձև) կարվում են սև գույնի կպչուն ժապավեններ: Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ

	չափսի արհեստական կաշվե կամ համարժեք պաշտպանիչ շերտ: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փաթեթավորումը՝ արկղերով, արկղի մեջ 20 հատ: Արկղերում գլխարկի ներսից գլխարկաբոլոքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմրթելու համար: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Չափսերի սանդղակը. 54 – 60, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САЭ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	